

# ՅՈՎՀԱՆՆԵՍ ՓԱՇԱ ՍԱԳԸԶԵԱՆԻ ԴԱՄԱԿՆԵՐԸ

(Շար. եւ վերջ)

Պօլիս, 15 Ապրիլ 1891

Իմ սիրելի որդեակս,  
Ժամը 2 է կէսօրէն ետքը. դեռ մեր Տիվա-  
նը՝ ուսկից կը գրեմ այս պատասխանս Քու 10  
Մարտի նամակիդ, ոչ ոք չէ եկած, Բամազանի  
պատճառաւ. աղէկ գիտնալով որ ազատ ժամա-  
նակ պիտի ունենամ հոս, կաղամար մը եւ զը-  
րիչ մը հետս առեր էի քեզ գրելու նպատա-  
կաւ: Արդէն ամէն օր չեմ գար ի Սթամպոլ,  
եւ Բամազանի պարապ ժամերէն օգնու կը  
քաղեմ իմ անվերջնալի լեզուաբանական աշ-  
խատութիւնս վերջացնելու համար: Այլ այս  
անգամ կը յուսամ թէ մինչեւ Բամազանին  
վերջը կարենամ աւարտել, օրինակութեամբ  
հանրապէս, երկասիրութեանս առաջին մասը,  
այսինքն vocabulaire ին միայն Ա գիրը՝ որ  
բաւական ստուար հատորիկ մը պիտի կազմէ  
եւ զոր վեցերորդ կամ եօթերորդ անգամն է՝  
նորէն կը շարագրեմ: Այն ատեն Քու միջոցաւ  
Միւսիս Ժօրժ Բերօյին քանի մը օրինակ պի-  
տի ուղարկեմ, որպէս զի Օրբերթին եւ արեւ-  
լազէտներէն միւսներուն ներկայացնէ. նայինք  
երբ պիտի դայ այն երջանիկ օրը: Չես ըսած  
ինձ թէ Լոնտրա տպուող Թերթին յորում Պաղ-  
ղիացի մը յօդուածներ կը հրատարակէ հայե-  
րէնի վրայ, ո՞ր Թերթին է. եթէ կրնաս այս  
մասին տեղեկութիւններ արձուլ եւ ստուգել  
միանգամայն թէ նոյն Թերթին ո՞ր Թիւերն են  
զայնս պարուսակող, զանոնք գնել տուր, կամ  
բերել տուր զըրպաճառի մը ձեռքը եւ ինձ ու-  
ղարկէ՛, եւ կամ միայն Թերթին անունն ու  
Թիւերն իմացուր ինձ. ես զուրաւ կրնամ բերել  
տալ:

..Անցեալ իրիկուն Չուհաճեանին մէկ նոր

օփերթը ներկայացուցին, Zémireh անուամբ՝  
որուն ներկայ գտնուեցայ. թէ միւսիս Միքէի  
եւ թէ՛ իմ վրաս, ինչպէս եւ շատ ուրիշներու,  
մեծ ազդեցութիւն ըրաւ մեր maestro ին այս  
գործը՝ որ ոչ թէ իր հին արեւելեան ոճով,  
այլ զուտ դասական երաժշտութեան ոճով զըր-  
ուած է եւ յոյժ գեղեցիկ մասեր կը պարունա-  
կէ, orchestrationը յատկապէս գովեստից  
արժանի ըլլալով: Մեր գացած իրիկունը թատ-  
րոնը լեցուն էր, եւ ոչ մէկ պարապ օթեակ չը  
կար. այլ հետեւեալ իրիկուններն կարծեմ  
այնչափ բազմութիւն չէ եղած. իսկ այն իրի-  
կուն ճշմարիտ ovation մը ըրաւ հասարակու-  
թիւնն հեղինակին. երեք անգամ կանչուցաւ.  
եւ երգերէն մէկ քանին կրկնել տուին: Եթէ  
այս գործս կարենար Բարիդի թատրոններէն  
մէկը ներկայացուիլ, կարծեմ թէ շատ աղէկ  
ընդունելութիւն կը գտնէր:

Բերա, 9 Մայիս 1891

Իմ ազնիւ Արմենակս,

Քու նամակիդ պատասխանը քանի մը օր  
ուշացուցի յուսալով որ այս օրերս կրնամ Ա-  
րիֆ պէյը տեսնել եւ թերեւս իրմէ՛ այո՛ կամ  
ն՛չ պատասխան մը արձուլ իմ ինքբանացս վը-  
րայ: Այս անձին շատոնց դիմած ըլլալս congé  
մը ընդունելու համար ուղղակի կայսերէն, ար-  
պէն գրեցի մայրիկին, այն երկայն նամակիս  
մէջ զոր ընդունած է անշուշտ եւ յորում ձեր  
ճանապարհորդութեան վրայ ընդարձակ կը  
խօսիմ իրեն: Չորս անգամ արդէն գացի իր  
տունը, ատանց զինքը գտնելու, միշտ Պալատն  
էր. վերջին անգամ, այսինքն երէկ իրիկունն,  
թէ պէտ դարձեալ ինքն հոն չէր, այլ իւր տըն-

տեսը որ կ'երեւայ թէ կը ճանչնայ զիս, վերհրամցուց զիս եւ իՔրքարը մխտոնը ըրինք-գոնէ եկած ըլլալս իմանալով, այցելութեանս պատճառը միտքը կը բերէ, թէպէտ եւ արդէն իրեն երկու անգամ այցատուոս զիւրած եմ, միայն վրայ քանի մը տող գրելով, Պայրամին երբորք օրը՝ առևտուուն, դարձեալ պիտի երթնամ տունը եւ կը լուսամտ թէ կը տեսամ զիւրը: Իսկ զարով մայրիկին գրած վերջին նամակին կարեւորագոյն մասին (վասն զի ԱարիՓ պէյին ըրած ինդրանացս նպատաւոր պատասխան մը առնելու բնաւ յոյս չունիմ)՝ այսինքն ձեր հոս դալու խնդրոյն, կ'աղաչեմ դարձեալ մայրիկին որ միայն ինձ plaisir ընելու համար որդուրովիւն մը չառնու. արդարեւ ես առաջարկեցի այդ ճանապարհորդութիւնն, բայց եւ աւելորդ է ըսել թէ ո՛րքան երկնսիկ կ'ըլլայի, ինչպէս եւ դուք, եթէ կարենայինք զիչ աստինէ մէկգմէկ տեսնել. այլ ասոր հակառակող պատճառներն ալ Ֆրկարօրէն բացատրած եմ իրեն, որպէս զի ինդրոյն ամէն հանդամանացը տեղեակ ըլլալով, այնպէս ընէ, ինչպէս իրեն պատշաճագոյն երեւի:

Արդարութեան պաշտօնէութեան խորհրդական զեռ ոչ ոք չանուանուեցաւ. կարծեմ Պայրամէն ետքը իրատէն կ'ելլայ. ըստ իմ կարծեացս, ո՛չ Լեպիպէ Էֆէնտին կ'անուանուի, ոչ ես, թէպէտ եւ առ այժմ մեր երկուքին խօսքը կայ, այլ ուրիշ տանիկ մը, այն պաշտօնէութեան անդամներէն:

Վիեննայի Համիդա ամսօրեայ մամադրոյն ջու իմաց տուած թուերը աչքէ անցուցի, այդ Հանդէսը երթալով շահարգիւ կերպարանք մը կ'առնու եւ միտքս այս տարիէ սկսեալ բաժանորդ գործել է. իսկ Լոնտրայի հայերէն լրագրոյն յօդուածներն՝ եթէ կրնաս, կտրելով ուղարկէ նամակիդ մէջ:

... Բոլոր Բամազանի ամիբ իմ լեզուագիտական այլատուութեամբս զգաղեցայ, եւ թէպէտ առ այժմ յերոպա ուղարկելու մտար դրբեթէ աւարտած եմ, այլ դեռ քանի մը շարաթ կ'ուղէ, վերջին սրբագրութիւններն ընելու եւ մանաւանդ ընդօրինակելու եւ իմ գործիքովս տպելու համար: Բայց, եթէ ինքզինքս չեմ խաբեր, բաւական կարեւոր երկասիրութիւն մը ե-

ղաւ՛ զոր, մասամբ գոնէ, կարելի է որ չը դընահատեն Եւրոպայի գիտնականք:

... Վաղը Պայրամին առաջին օրը պիտի ըլլայ. եւ անկէ ետքը միայն մէկ ամիս Միւլքիէի դասերը պիտի շարունակենք: Բուն հանգըստեան ժամանակը անկէ ետքը կը սկսի եւ կը տեւէ մինչեւ ցլՄեպտեմբեր. ո՛ւր էր թէ կարենայի այն միջոցին ինքզինքս Եւրոպա նետել: ԱարիՓ պէյին հետ տեսութեանս ելքը, ինչպէս նաեւ Վահան Էֆէնտիին յաջողիւն անուանը անշուշտ երեք չորս օրէ կրնամ իմացնել ձեզ:

Կ. Պոլիս, 7 Յուլիս 1891

... Ուրախութեամբ կ'իմանամ ջու նամակիդ որ քաղաքական գիտութեանց զարդոցին երեք կարեւոր դասերէն զննութիւնը յաջողութեամբ անցուցեր ես. տարակոտ չունիմ որ մնացած դասերէդ ալ յաջող զննութիւն կուտաս Դեկտեմբերին եւ անցեալ զննութեանց մէջ առած թիւերդ ալ կ'իմանաս զիչ օրէն եւ կ'իմացնես ինձ: Նոյն յաջողութիւնն կը մտայեմ զեղ իբրևագիտութեան զարդոցին դասերուն համար: Այս դասերը միւսներէն դժուարին պէտք է ըլլան, բայց այս տարի ես, անցեալ տարուան պէս, անշուշտ գեղեցիկ զննութիւն մը կ'անցունես: Մեր Միւլքիէի վարչութեան դասերն՝ մանաւանդ Եւրոպայի վարչական դրութեանց վերաբերող մասին մէջ, այնքան մանրամասն տեղեկութեանց կարգու չեն, գլխաւորապէս ժամանակին չը բաւելուն պատճառաւ. առջի տարիները Ֆրանսայի եւ ուրիշ Տէրութեանց ներքին վարչութեանց վրայ պատրաստած դասերն անգամ քանի տարի է որ հարկադրուած եմ զանց տանելու. ապա թէ ոչ ջու ստացած տեղեկութեանցը համար զեղ կը դիմէի: Իսկ Léon Sayի բառարանին եւ Leroy-Beaulieuի Բնչից բաշխման վերաբերող գրոց տեղեկութիւն չունիմ: Մեր ունեցած Dict. de l'Economie politiqueը բաւական հին է, թէպէտ իրստ գեղեցիկ յօրինուած. բնական է որ նոր բառարանին մէջ վերջերս քաղաքական տնտեսութեան վրայ արտադրուած նոր դրութեանց վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ ըլլան, բայց հին տնտեսագիտաց գրուածոց եւ դրութեանց մասին աւելի կատարեալ չը կրնար

ըլլալ: Leroy-Beaulieuին զերբը կը փափաքէի տեսնել. ուստի եթէ զունս զայն կարգայէ ետքը պահելու պէտք չունենաս, կրնաս ինձ զրկել. ապա թէ ոչ, զալ տարի հետք կը բերես: Նոյն հեղինակին էլեւմտութեան traité-ն զոր ունինք, ինչպէս նաեւ Տրէքոյի Traité de droit administratif (երկու մեծ հատոր) վերջին տպագրութիւնք են, եթէ չեմ սխալիր:

... Օղերը հոս շատ տաքցան. բարերախտարար Միւլֆիլիէի դպրոցը միայն երեք քննութիւն ունիմ անցնել տալու, մինչեւ Օգոստոսի վերջը: Մեր Համազգեաց դպրոցին աշակերտներէն Արթեմիս Խորասանճեանին մէտալլ մը շնորհել տուինք Alliance Françaiseի կողմէ: Յատուցիկայ ուղբաթ օր, եռամսեայ բարենշանից բաշխման առթիւ միւսիւ Քիւիինէն զայն հանդիսաւոր կերպով պիտի տայ օրիորդին:

... Համազգեաց դպրոցին ի նպատակ տրուած պարիս վերջնական հաշիւն է 416.33 օսմ. ոսկի, որմէ 133.46 ծախք, այսինքն 282 օսմ. 87 դր. զուտ հասոյթ:

Կ. Պոլիս, 12 Սեպտ. 1891

... Կարծեմ որ Լոնտրայի լեզուալիտական Congrèsն արգէն բացուած եւ նստրի վերջացուած է. այս նոյն Congrès ն որ անցեայ տարի ի Քօբենհակ ժողովեցաւ եւ որուն վարապար աշխատեցայ ներկայ գտնուելու: Միւսիւ Meillet ի վրայ տեղեկութիւն չունիմ, այլ լսեցի որ իր դասատուն, M<sup>r</sup>. Carnière, Մոզսիսի Խորենացու Պատմութեան վրայ զերբ մը յօրիներ է որուն մէկ օրինակը ուղարկեր է նաեւ հոս հրատարակուող Հայքնիփ լրագրոյն խմբագրութեան յետք Փարիզ վերադարձիլ, (եւթագրելով միշտ որ այս ժամուս Լոնտրա ես) զայն կրնաս գտնել, ինձ օրինակ մը ուղարկէ բարաւով:

... Եթէ Թայմզի կամ ուրիշ անգլիական օրագրի մը մէջ Լոնտրայի Արեւելագիտաց Ժողովին աշխատութեանց վրայ տեղեկութիւն պարունակող յօդուածի մը հանդիպես, կորէ եւ նամակիդ մէջ, կամ օրագրոյն նոյն թիւն բարաւով ուղարկէ ինձ:

Կ. Պոլիս, Բրիքնիքո, 5 հոկտ. 1891

... Գոհ եմ որ Անգլիոյ մայրաքաղաքը ձեր

ըրած սակաւօրեայ բնակութեան ժամանակ ա՛մէն նշանաւոր տեղերը այցելիր էք եւ անոնց վրայ ըստ կարելոյն գաղափար մը ստացել էք տեսեամբ՝ որուն տեղը ոչ մէկ նկարագրութիւն չը կրնար բռնել: Ինչո՞ւ կը զարմանաս որ բրիտանական Միւսէնի պարունակած հւնութիւնք մեծաւ մասամբ Տաճկաստանէ եկած ըլլան. եթէ Յունաստանն ալ Տաճկաստանի մէկ հին մասն սեպելու ըլլանք, ո՞չ ապաքէն քաղաքակրթութեան ամէն հին խանձարուքն ամփոփուած կը գտնենք անոր սահմաններուն մէջ, բաց ի Հոմովմէ, Պարսկաստանէ եւ Հնդկաստանէ. եւ տարակոյս չունիմ որ արդի Տաճկաստանի երկիրներն դեռ շատ դարմացման տարակայներ կը պարունակեն իրենց ծոցին մէջ՝ զալ սերնդոց համար, ինչպէս անցեալներն Քետացոց (Hittites կամ Hétéens) արձանապրութեանց յերևան ելլալը:

Լոնտոնի Արեւելագիտաց Ժողովի վերաբերեալ այլ եւ այլ օրագրաց մէջ յօդուածներ կարդացի, այլ ուղղակի ինձ վերաբերութիւն ունեցող ինչորոյ մը դեռ չը հանդիպեցայ:

Բերա, 26 Փետրվար 1892

... Հիմայ Համազգեաց վարժարանին բացը գոցելու համար, կը մտածենք ֆէք շամբէթը մը կարգադրել, զարնան համար, աշինքն Մայիս մէկին, ըստ նոր սոմարի, Բանկայիի աշխանց դպրոցին խնամակալու Աղբատասէր Ընկերութեան Տիկնանց հետ միանալով, բայց դեռ ձեւն ու պայմաններն որոշած չենք. եթէ յաջողիք այդ մտադրութեան մէջ, որուն վրայ այս օրերս յատկապէս պիտի խորրդակցիք, այս հանդէսն մայրիկին եւ Ասթիւնէին ճիշդ հոս հասնելու օրերը պիտի կատարուի:

Բերա, 26 Ապրիլ 1892

... Այս նամակին հետ միատեղ պիտի քնդունիս վեց օրինակ մէկ յօդուածի մը զոր նոր շարադրեցի: Ասոնցմէ երկուքը կը տանիս միւսիւ Ժօրժ Բէրոյին (Georges Perrot, membre de l'Institut, 42 Rue d'Ulm) որուն արգէն ներկայացար կարծեմ, եւ երկու օրինակը կը մատուցանես իրեն իմ կողմէս, շատ բարեւեանով,

նամակի մը հետ զոր ներխափեալ կը դռննա եւ կը գոցես՝ զայն կարգալէ ետքը: Իրեն դուն ալ կ'աղաչես իմ կողմէս որ մէկ օրինակը իրեն պահելով միւսը ներկայացնէ Միւսիւ Ժիւլ Օբրերթին, եւ շնորհակալութիւններս կը կրկնես իրեն. իսկ միւս օրինակներն պէտք է ուղարկու հետեւեալ անձանց, անոնց հասցէներն բնասուցելէ յետոյ, Mr. Ernest Renan, Mr. J. Halévy, Mr. A. Amiaud, Mr. Joachim Ménant, վերջին երեքն ալ ծանօթ ասորեանազէտք որոնց հասցէները չունիմ հոս: Միայն եթէ այս անթիւ կ'ուզես կամ կրնաս Միւսիւ Ռենուին հետ տեսութիւն ընել, իրեն օրինակը իմ կողմէս կրնաս ուղղակի իրեն ձեռքն յանձնել, այն երեք օրինակներէն մէկն որուն վրայ Hommage de l'auteur գրուած է եւ որոնց միւս երկուքը Միւսիւ Բէրթիին եւ Միւսիւ Օբրերթին համար են: Գրութիւնս ստորագրած չլլայալուս համար կրնաս ըսել որ անձնական պատճառներու համար զոնէ հիմայ չեմ ուզեր որ անունս հրատարակուի:

Քերտ, 27 Ապրիլ 1892

Իմ ազնիւ Արմենակս,

Երէկ չէ ատջի օր քեզ ուղարկած գրութեանց մէջ՝ զոր հաղկո ընդունած պիտի ըլլաս, քանի մը տող առոցեր եմ օրինակելու ուստի իւրաքանչիւր օրինակին ցրէ ձջին ծանօթութեանը (որ ag-ar-in, բառով կը լմրննայ) աւելցուր հետեւեալ տողերն... ag-ar-in « parent » (père et mère), ug-ul- (l) a, fils (cf. turc ogouhl, même sens et togħ-ur-mak « engendrer ») et la variante ibil ib - il, ib - il - a (turc èv - èl, « fils »); ib, ip, « créer, engendrer ».

Քերտ, 29 Ապրիլ 1892

... Անցեալ հինգշաբթի նամակ մը դրեցի յորում կ'ապարկէի քեզ իմ գրութեանս ցրէ էջն քանի մը տող աւելցնել: Հիմայ կը տեսնեմ որ շատ ուրիշ սխալներ բերե եմ ընդօրինակութեան ատեն: Ուստի քեզ այս անգամ նոր տեսարակ մը կ'ուղարկեմ զոր կը դրկեմ Mr. A. Carrière ծանօթ հայադէտին. յետոյ 6 հատ թերթ որոնց խորքանչիւրը՝ առջի տետրակներն տուած կամ ուղարկած անձանցը պէտք է հասցունես. եթէ

մի քանին դեռ քոյղ են, նոյն սրբադրութիւններն բուն տետրին մէջ կրնաս ընել:

Կ. Պօլիս, 8 Մայիս 1892

... Ուրախ եմ որ միւսիւ Ժ. Բէրթն տեսեր եւ եւ սրբադրութիւններն ալ ուղարկեր եւ իրեն հիմայ յատկապէս աշխատութիւն մը պատրաստելու վրայ եմ գուռ հնազրիսակամ՝ որուն համար պիտի չկարենայ ըսել թէ ձեռնհաս չէ զայն գատելու: Յուսամ որ մինչեւ հիմայ միւս օրինակներն եւս ցրուած եւ: Դժբախտաբար եւ ալ միւս անձանց հասցէներն չեմ գիտեր. միայն Հայկ. Վիին մէկ հին հասցէն ունիմ, որ է Rue Aumaire, 26, բայց այս անձանց ամենն ծանօթ գիտնականք կամ դասատուք ըլլալով, կրնաս իրենց հասցէներն դիւրութեամբ ստուգել հոն, եւ առանց ստոր համար ժամանակ կորսնցնելու, մէկիկ մէկիկ մէկ քանի շարթուան մէջ իրենց ձեռքն հասցնել գրութիւնս:

Քերտ, 30 Յունիս 1892

... Արդէն մեր Միւլթիէի քննութիւններն սկսան. եւ միայն չորս քննութիւն ունիմ որոնց մէկը կատարեցի. միւսերուն դեռ բաւական ժամանակ կայ: Հիմայ արքայտերէն - Հայերէն բառարկրքի (vocabulaire) պէս երկասիրութիւն մը կը պատրաստեմ, որուն բուն օրինակը որ յուսամ քանի մը օրէն աւարտել. զայն եւս պիտի տպագրեմ առջի գործիս պէս, եւ այն անձանց պիտի ուղարկեմ: Յոյս ունիմ որ այս անգամ աւելի ջերմաբար կ'ընդունուի աշխատութիւնս լեզուապիտաց կողմէն՝ որոնցմէ մէկ՝ քանիէն արդէն բաւական դո՛հացուցիչ պատասխաններ ընդունեցայ:

Քերտ, 12 Յուլիս 1892

... Քաղաքական տեսեսութեան բառարկրքի համար բաժնի աղէկ մը չը հասկեցայ եւ չեւ գիտեր ինչու զայն ծախելու կը մտածես. եւ ունիմ արդէն հին տիպը. եթէ նոր բարբոյլի տարբեր գործ մըն է, թէ իմինս եւ թէ քուկինդ կը պահենք. իսկ եթէ առաջինին ինչ ինչ բարւոքամբ մէկ նոր տպագրութիւնն է, ահ ատեն իմինս ո՛ր եւ է գնով կը ծախենք հոս: Արդէն զրած էի քեզ որ René<sup>x</sup> Stoutmeff Budget-ն (1891) արդէն եւ բերել տուած եմ, իսկ այն

գիրքերն զոր առնել կ'ուզես, բայց կը վախնաս որ հոս դժուարութեանց առիթ չըլլան, կրնաս գանձոք բութալով sous-bande ինծի կամ միւսիւ Միքէլիս ուղղել, մէկ հատորը երկուքի անգամ բաժնետել եթէ հարկ ըլլայ. յետոյ հոս կ'ազմել կուտանք:

... Բաղաբական ուսմանց դպրոցէն առած մըցանակը ամենուն կողմէ շնորհաւորութեանց առիթ մը եղաւ. ես ալ Տիլիպ էֆէնտիին աղաչեցի որ զայն ծանուցանէ Թալիզ օրապրոյնի մէջ, որ կէս պաշտօնական օրագիր մըն է եւ հրատարակուած entrefilet ն կ'ուղարկեմ թեղ ներփակեալ: Այսպէսով դուն հոս վերադառնալէ առաջ, անունդ թիչ շատ ճանչցուած կ'ըլլայ տաճկական աշխարհին մէջ:

Բերա, 5 Օգոստ. 1892

Քու վերջին նամակը առի որուն մէջ քընուութեանցը վրայ տեղեկութիւն կուտաս ինձ. շատ ուրախ եմ որ բաւական խրթին առարկայներու վրայ աղէկ պատասխանելու կարող եղեր ես: Երբ այս թուղթն ձեռքէ հասնի, թերեւ իրաւագիտութեան դպրոցին քննութիւններն ալ անցած կամ անցնելու վրայ պիտի ըլլաս. թէ՛ իմ եւ թէ՛ մայրիկին ու Ասթիւնէին մաղթանքն քու յաջողութեանդ համար անուշտ ի դերեւ չին ելած, եւ կր յուսամ որ նոյնպէս աղէկ լուրեր կ'ընդունիմ քանի մը օրէն այդ քննութեանց վրայ եւս: Երբ քննութիւններդ ամբողջ ըլլան, կրնաս քանի մը օր Բարիզ հանգիստ ընել, եթէ ախորժիս, կամ դառնալ անմիջապէս մեր քով: Մենք դեռ չկրցինք մեկնիլ Բերայէ, մամաւտարապէս կարատեսաց շինուելուն պատճառաւ. վասնդի պարտաւորեցանք

մեր սայօնն նորոգելու: Մտքերնիս վաղը շարաթ օր գեղ ելնել է, եթէ կարգէ դուրս պատճաս մը դարձնալ արգելք չըլլայ: Քու զրբերուդ համար կաթողիկոսին հետ խօսեցայ. որչափ գիրք ունի, եւ կարծեմ թէ ասոնց ամէնը ուսումնական ու ըստ ինքեան անմեղադրելի զրբեր են, զամենը սնտուկի մը մէջ դիր եւ սնտուկի ուղղէ կաթողիկոսին, Monseigneur Pierre Azarian, Patriarche des Arméniens catholiques, եւ հասարակ ճամբով ուղարկէ: սնտուկը առանց բացուելու կրնայ յայպէս մաքսէն անցնիլ եւ առանց դժուարութեան մեր ձեռքն հասնիլ: Խոհեմութեան համար ամենէն անմեղ զրբերը սնտուկին վրան դիր:

... Մօտերս թեզ նոր աշխատութեան մը քանի մը օրինակները պիտի ուղարկեմ զոր, պիտի հասցունես քանի մը գիտնականաց որոնց հասցէներն արդէն գիտես կարծեմ:

Բերա, 21 Յուլիս 1892

Ասթիւնէին գրած նամակիդ մէջ ինչ տեղեկութիւններ կը խնդրես հոս բերելու զրբերուդ վրայ: Չեմ կարծեր որ Taine ի Révolution ր անպատիժ անցնի մեր մաքսէն. ուստի աղէկ կ'ընես զայն իբր imprimé, sous-bande զրկելու իսկ միւս ըսած զրբերէդ, միայն կարծէի թէ Léonce de Lavergne ի գիրքը՝ որ մէկ պզտիկ հատոր մըն է, ունիմ արդէն, բայց չը գտայ զայն մեր զրբերուն մէջ: Ուստի կրնաս զայն առնել. իսկ քու յիշած անտեսաղէտներէդ, միայն J.S.Mill ի Բազաբական Տնտեսութիւն եւ ուրիշ գրութեաններն ունիմ անգլիարէն զոր դուն արդէն կը հասկնաս. միւսներն աղէկ կ'ըլլայ որ առնես. ան ատեն բաւական հաւաքածոյ մը կ'ունենանք տնտեսական գրութեանց:

